ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ РЕГИОН
ВОСКЕАТСКОЕ СЕЛЬСКОЕ
УПРАВЛЕНИЕ

N 01-112

«05» 10 2015թ.

Արմավիրի մարզ գ. Ոսկեհատ
Հեռ. 5-29-35

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավարի կողմից 2015 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում արձակված կարգադրությունները և ընդունված որոշումները:

Առդիր 4 թերթ:

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր Գ. Ներսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ

« 15 » սեպտեմբերի 2015 թ. թիվ 9-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետով,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 91 որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Խարոնք գյուղի Արարատյան 9 տան բնակիչ Արտաշես Գրիգորիի Ռոստոմյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ու Մ ԵՄ՝

1. Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի տարածքում գտնվող , Արտաշես Ռոստոմյանին սեփականության իրավունքով պատկանող, 04-081-0170-0001 կադաստրային ծածկագրով 1,8 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի 0,9130հա մասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի, ջերմոցային տնտեսություն և պահեստ կառուցելու համար:

2. Արտաշես Ռոստոմյանին սահմանված կարգով տալ շինարարության թույլտվություն:

3. Կատարել համապատասխան փոփոխություն համայնքի հողային ֆոնդի հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր՝ Գ. Ներսիսյան

2015 թվականի 15 սեպտեմբերի

գ. Ոսկեհատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» սեպտեմբերի 2015 թ. | թիվ 10-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ - ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային, աշխարհագրական, օբյեկտի անվանակոչման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N2389-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Ոսկեհատ համայնքի ավագանու 14.08.2006թ. «Հայաստանի Հանրաաետության Արմավիրի մառզի Ոսկեհատ գյուղական համայնքի փողոցների անվանակոչման, տների ու տնամերձերի համարակալման մասին» թիվ 2 որոշումը:

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղական համայնքում գտնվող քաղաքացի Մանուշակ Վարդապետյանին պատկանող 04-081-040-045 կադաստրային ծածկագրով բնակելի տանը տալ հասցե՝ Բարեկամության 73:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր՝

Գ. Ներսիսյան

2015 թվականի 30 սեպտեմբերի
գ. Ոսկեհատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

01 սեպտեմբերի 2015թ. Ն 15 -Ա

## ՈՍԿԵՀԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՌԱՖԻԿ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158- րդ, 159- րդ և 164-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Ռաֆիկ Ավագյանի դիմումը .

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ Ռաֆիկ Ավագյանին հատկացնել իրեն հասանելիք 2015 թվականի ամենամյա հերթական արձակուրդը 2015 թվականի սեպտեմբերի 1-ից՝ 24 աշխատանքային օր տևողությամբ:
Աշխատանքի մեջ համարել 2015 թվականի հոկտեմբերի 6–ից:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր՝ Գ. Ներսիսյան

2015 թվականի սեպտեմբերի 01
գ. Ոսկեհատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ու Թ Յ Ու Ն

01 սեպտեմբերի 2015թ. N 16 -Ա

## ՈՍԿԵՀԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՎԱՐԻՉ ՄՈՆԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158- րդ, 159- րդ և 164-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Մոնիկ Ներսիսյանի դիմումը .

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ու Մ Ե Մ՝՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի գրադարանի վարիչ Մոնիկ Ներսիսյանին հատկացնել իրեն հասանելիք 2015 թվականի ամենամյա հերթական արձակուրդը 2015 թվականի սեպտեմբերի 1-ից՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
Աշխատանքի մեջ համարել 2015 թվականի հոկտեմբերի 7–ից:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից :

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր՝ Գ. Ներսիսյան

2015 թվականի սեպտեմբերի 01
գ. Ոսկեհատ